ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.5-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021թ թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ, 10-րդ, և 27-րդ կետերի պահանջներով,

հիմք ընդունելով Պալատի երիտասարդական խորհրդի անդամ Կարեն Առաքելյանի (արտոնագիր՝ թիվ 3262) դիմումն իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ,

հաշվի առնելով, որ Կարեն Առաքելյանի լիազորությունների ժամկետի ավարտին մնացել է վեց ամսից պակաս ժամանակ, և ըստ այդմ՝ անհրաժեշտ է առաջանալիք թափուր տեղը համալրել 2025 թվականի ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից,

նկատի ունենալով փաստաբան Գարիկ Օգանեսյանի (արտոնագիր՝ թիվ 3849) համաձայնության առկայությունը,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամ Կարեն Առաքելյանի (արտոնագիր՝ թիվ 3262) լիազորությունները,

2. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամ նշանակել **Գարիկ Օգանեսյանին** (արտոնագիր՝ թիվ 3849)՝ մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Հարութ Ակլունց

6 օգոստոս 2025թ.
թիվ 238-Ա
ք. Երևան